

ԻՐԱՎԱԿԱՆ

Չկա Հասարակություն
անտեղ իրավունքի
Ubi societas ibi ius

մշակույթ

չ ո ռ ե թ շ ա թ թ ի
թիվ 19 (39)
2008 թ. նոյեմբերի 26

«Մեծ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

2009 Թ. ԱՊՐԻԼԻՆ

ՀԱՍԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՉ ՀԱՆՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ
www.campaignforeducation.org

Համընդհանուր կոչ հանուն կրթության (ՀԿՀԿ) քարոզարշավի 2009 թ. պլանավորված միջոցառումների շարքը նվիրվել է «Երիտասարդության և մեծահասակների կրթություն և ուսուցում ողջ կյանքի ընթացքում» թեմային:

Աշխարհում գրանցված են 774 միլիոն անգրագետ մեծահասակներ, որոնց 64%-ը կանայք են: Մեծահասակների կրթությունը համընդհանուր տարրական կրթություն ապահովելու կարևորագույն ուղիներից է:

ՀԿՀԿ-ն 2009 թ. «Մեծ ընթերցումներ» է կազմակերպում «Բաց գրքեր բաց դռներ» նշանաբանով, որի շրջանակներում կընթերցվեն ճանաչված մարդկանց պատմություններն այն մասին, թե ինչ-

պես է կրթությունը փոխել իրենց կյանքը, և թե այն ինչ նպաստավոր դեր ու նշանակություն կարող է ունենալ միլիոնավոր անգրագետ մարդկանց կյանքում, եթե կենսագործվի «Կրթություն բոլորի համար» խոստումը:

Քարոզարշավի նպատակն է ներգրավել հնարավորինս շատ մեծահասակների, երիտասարդների, պետական և քաղաքական գործիչների, դպրոցների երեխաների, որպեսզի ապահովվի կրթություն բոլորի համար խոստումը: Իրադարձությունների զագաթնակետը կլինի ապրիլի 2009 թ. 23-ին կազմակերպվող Մեծ ընթերցումը՝ «Բաց գրքեր, բաց դռներ» նշանաբանով:

ՁԱՅՆՄԵԾԱՑ

Առանց ընթերցանության չկա իսկական կրթություն, և չի կարող լինել ո՛չ ծաշակ, ո՛չ ոժ, ո՛չ բազմակողմանի ըմբռնում: Գյոթենն ու Շեքսպիրը հավասար են մի ամբողջ համալսարանի: Ընթերցանության մարդ վերապրում է դարեր:



ԱՆՇԵՍԿԱՊ ՕԲՐԱՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՌԴ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԻՋԵՎ

2008 թ. սեպտեմբերի 29-ին Երևանում ստորագրվել է համագործակցության համաձայնագիր Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի և Սանկտ-Պետերբուրգում ՌԴ Մարդու իրավունքների լիազորների կայացուցիչ Իգոր Միխայլովի միջև:



Համաձայնագրով կողմերը պարտավորվել են իրենց իրավասության սահմաններում աջակցել ժողովրդավարական և իրավական պետության սահմանադրական հիմքերի ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքների տարածմանը, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Այդ համաձայնագրի ստորագրմամբ կողմերը նպատակ են հետապնդում համակարգել իրենց գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև օրինականության և

իրավակարգի ապահովման բնագավառներում, ստեղծել համապատասխան պայմաններ Սանկտ-Պետերբուրգում և Հայաստանում գտնվող տարբեր կազմակերպությունների միջև փոխհարաբերություններ ձևավորելու, ամրապնդելու և ընդլայնելու նպատակով, ինչպես նաև նպատակ են նրանց համագործակցության ակտիվացմանը, աջակցել համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացմանը, զարգացնել նոր տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվության փոխանակման գործընթացը և այլն:

Համաձայնագիրը կնքվել է հինգ տարի ժամկետով:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում	էջ 2
Դոկտոր Անի Քալաջյանի «Հակամարտությունների կարգավորման կենտրոնը» ԼՂՀ-ում	էջ 3
Հղիության արհեստական ընդհատում, թե՞ մարդասպանություն	էջ 3
Նորայր Խրիմյան. «Ուղևորություն Արևմտյան Հայաստան»	էջ 4
Կալանավորներն այսուհետև կարող են հաշվառվել որպես ռիսկային	էջ 5
Մարինե Մխիթարյան. «Պետրոսյանների կրկեսային դինաստիան»	էջ 6
Մշակութային լրաքաղ	էջ 6
Սիրանույշ Պետրոսյան. «Եկեղեցի՝ տղամարդու հագուստով, կիսամերկ ու գլխաբաց»	էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ	էջ 8
Լրահոս	էջ 8



ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՆԿԱՐՅՈՒՄ

ՄԱՆԻ

Խեղվում են կանանց ու աղջիկների սեռական օրգանները

Մալիի բնակչուհի Ֆանտա Կամարան դեռևս 5 տարեկան էր, երբ նրան ենթարկեցին սեռական օրգանների խեղման, որի արդյունքում նրա միզուկը վնասվեց, և նա այլևս չի կարողանում կառավարել միզելու ցանկությունը: Նա ստիպված թողել է ուսումը, քանզի շրջապատը խուսափում է նրանից, և Կամարայի ապագան դեռևս մշուշոտ է:



Ֆանտա Կամարա

Դեպքը Մալիում եզակի չէ: Կանանց սեռական օրգանները խեղվում են Մալիի բոլոր շրջաններում ոչ միայն ինքնիշխան, այլև բժիշկների միջամտությամբ:

Դժբախտաբար, հնարավոր չէ աջակցություն ցուցաբերել այդ երևույթի բացասական հետևանքներից տառապող բոլոր կանանց և աղջիկներին: Համախառն անգամ բժիշկներն ի գործը չեն ապաքինել նման հիվանդներին: Համապատասխան օրենքի բացակայության հետևանքով Մալին փորձարկումների տարածք է ծառայում հարևան երկրների հեթմոսների համար (Բուրկինա Ֆասո, Սենեգալ և այլն):

Երևույթը, սակայն, միայն Մալիին չէ հատուկ: Աշխարհում ավելի քան 130 մլն կանայք և աղջիկներ ենթարկվել են նմանօրինակ խեղումների, իսկ տարեկան 2 մլն աղջիկներ խեղման ենթարկվելու սպառնալիքի տակ են:

Կալանավոր երեխաների թիվը մեկ միլիոն է



Այսօր աշխարհում կան շուրջ մեկ միլիոն կալանավորված երեխաներ: Այս տաճարապալից փաստին ուշադրություն է դարձրել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Նեվիլ Փիլեյը:

«Մենք դեմ չենք կալանավորներին, սակայն դրանցում պետք է գտնվեն նրանք, ովքեր իսկապես արժանի են դրան», - հայտարարել է Փիլեյը՝ ավելացնելով, որ կալանավորները և անգամ ամենադժգոյս հանցագործները չպետք է ենթարկվեն մարմնական, սեռական կամ հոգեբանական բռնությունների:

Նա նշել է, որ այսօր կալանավորների իրավունքների ոտնահարումների խնդիրն առկա է բոլոր երկրներում, ուստի խնդրի լուծումը համատեղ ջանքեր է պահանջում:

ՄԱԿ-ի գլխավոր իրավապաշտպանը մտահոգություն է հայտնել այն առնչությամբ, որ եվրոպայում հաճախ ճաղերի ետևում հայտնվում են վտարանդիներն ու ապաստան փնտրող անձինք: Նա անհանգստացած է, որ եվրամիության նոր կանոնները՝ ապօրինի միգրացիայի կարգավորման վերաբերյալ, կարող են հանգեցնել նման մարդկանց նկատմամբ չարաշահումների երկարաժամկետ կալանքի տակ պահելու ձևով:

«Վտարանդիների, փախստականների և ապաստան փնտրող անձանց մեծ մասը հանցագործ չէ, հետևաբար չպետք է հանցագործների նման կալանքի տակ պահվի», - ասել է գերագույն հանձնակատարը:

Պարենային ճգնաժամը՝ կենաց-մահու խնդիր

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամն ավելի է խորացրել աղքատության խնդիրը: Նոր ցնցումների հետևանքով քաղցած և աղքատ մարդկանց բանակը համալրվել է ևս 75 միլիոնով: «Մարդկային այս մեծածավալ ողբերգությունը ծավալվում է մի ժամանակահատվածում,

երբ մենք փորձում ենք կատարել Հազարամյակի հռչակագրում զարգացման ոլորտի առաջին նպատակի իրագործման խոստումը՝ մինչև 2015 թ. կրճատել աղքատության ծավալը»,- նշել էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը:

Մինչ գների աճը աշխարհում 800 մլն մարդ ամեն գիշեր քաղցած էր պառկում քնելու. մտավախություն կա, որ առաջիկայում այդ պայմաններում կարող է հայտնվել ևս 100 մլն մարդ:

Գլխավոր քարտուղարն անհանգստացած է, որ պարենային ճգնաժամը կարող է հանգեցնել ոչ միայն բնակչության աղքատացմանը, այլև սոցիալական անկարգությունների:

Կյանքի տևողության տարբերությունը հարուստ և աղքատ երկրներում ավելի քան 40 տարի է

Կյանքի տևողության տարբերությունը հարուստ և աղքատ երկրներում ավելի քան 40 տարի է: Այս տարի ծննդաբերող 136 մլն կանանցից շուրջ 58 միլիոնը որևէ բժշկական օգնություն չի ստանա ոչ ծննդաբերության ընթացքում, ոչ էլ ետծննդաբերական շրջանում: Այս մասին հայտնում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)՝ աշխարհի առողջապահության վիճակի վերաբերյալ նոր զեկույցը:

«Մայրական, ծնվել և մինչև 5 տարեկան երեխաների մահացության բարձր ցուցանիշները հաճախ վկայում են մաքուր ջրի, անհրաժեշտ սննդի, հակավարակայնության անմատչելիության մասին: Առաջին բուժօգնությունն ու առանձին համայնքներում անհրաժեշտ ծառայությունների մատուցումը կարող են նպաստել առողջության բարելավմանն ու կյանքեր փրկելուն»,- հայտարարել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գործադիր տնօրեն Էն Վենեմանը:

Չեկույցում շեշտվում է, որ շատ ազգային առողջապահական համակարգեր այլևս պատշաճ ուշադրություն չեն դարձնում արդարացի բուժօգնության ցուցաբերմանը: Ունևոր մարդկանց համար, որպես կանոն, հասանելի են լավագույն բուժօգնության հնարավորությունները, մինչդեռ չքավորներն ստիպված են անձամբ հոգալ սեփական առողջության համար:

ԱՀԿ-ի փորձագետների համոզմամբ՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման պարագայում հիվանդությունների բեռը կարող է կրճատվել ավելի քան 70%-ով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անցկացրեց իր 10.000-րդ դատաքննությունը



Դեռևս 1959 թ. հիմնադրված Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 1961 թ. անցկացրեց իր առաջին դատաքննությունը: 1998 թ. նոյեմբերի 1-ին Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 11-րդ արձանագրությունը մտավ ուժի մեջ, որն

800 մլն եվրոպացիների համար ճանապարհի հարթեց դեպի դատարան: Մինչև 2005 թ. դատարանն իրականացրել էր 5.968 դատաքննություն: Հաջորդ 3 տարիներին դատարանը քննեց ևս 4.000 գործեր:

Ժան-Պոլ Կոստան՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահը, ասել է. «Այսօր անհատական դիմումներ կայանում են իրավունքը համաձայնագրի կարևորագույն դրույթներից է... Դատարանի գերծանրաբեռնվածությունը մեղմելու համար եվրոպայի խորհրդի անդամ երկրների օրենսդիր և դատական մարմինները պետք է համատեղ աշխատեն՝ պահպանելու համաձայնագրով և նրա արձանագրություններով պահովվող իրավունքներն ու ազատությունները: Միայն ազգային մակարդակում պաշտպանվածության բարելավման դեպքում հնարավոր կլինի կայուն կոպիտ խախտումները»:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ

- Գեկերների 1 - ՉԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օր
- Գեկերների 1 - ՄԻԱՎ-ի կամավոր խորհրդարարություն պահանջում և քննադատում միջազգային օր
- Գեկերների 2 - Սպրկության վերացման միջազգային օր
- Գեկերների 3 - Հաշմանդամների միջազգային օր
- Գեկերների 5 - Տնտեսական ու սոցիալական զարգացման կամավորների միջազգային օր
- Գեկերների 7 - Քաղաքացիական ավիացիայի միջազգային օր
- Գեկերների 10 - Մարդու իրավունքների օր
- Գեկերների 11 - Լեռների միջազգային օր

ԱՅՈՒՄՆԱՍՄԸ

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը հորդորում է վերացնել մահապատիժը



ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը մտահոգություն է հայտնել Աֆղանստանում վերջին օրերի ընթացքում որոշ կալանավորների մահապատի ենթարկելու առնչությամբ՝ հորդորելով կառավարությանը դադարեցնել դրանց ի կատար ածումը:

«Կալանավորների նկատմամբ կիրառվող դաժանությունը հաստատում է Աֆղանստանի օրենքների և դատական համակարգի անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին»,- ասել է ՄԱԿ-ի գերագույն հանձնակատար Նեվիլ Փիլեյը՝ հորդորելով Աֆղանստանի կառավարությանը միանալ այն 68 երկրներին, որտեղ մահապատիժը որպես պատժի միջոց վերացվել է:

Ռուս-վրացական հակամարտություն. արդյունքների ամփոփում



«Միջազգային համայնքում» կազմակերպությունը տեղեկացնում է, որ օգոստոսյան հակամարտությունից ամիսներ անց ավելի քան 20.000 վրացիներ դեռևս չեն կարողանում վերադառնալ Հս. Օսիայում գտնվող իրենց տները, իսկ վերադարձողներն իրենց տները գտել են թալանված և ավերված վիճակում:

«Առանց ճշմարտության և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ոչ հաշտություն, ոչ էլ կայուն խաղաղություն է հնարավոր»,- արձանագրում է կազմակերպությունը՝ հորդորելով անհապաղ հետաքննել ռազմական գործողություններին մասնակցած կողմերի քայլերը:

«Խաղաղ բնակիչները կրակի գծում. վրաց-ռուսական հակամարտությունը» վերնագրով զեկույցում տեղ գտած ապացույցները անհերքելիորեն վկայում են միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների խախտումների մասին:

Ընդ որում՝ խաղաղ բնակիչների շրջանում արձանագրված մահվան դեպքերի ընդհանուր թիվը զգալիորեն գերազանցում է ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցած մարդկանց մահվան դեպքերի թիվը՝ թե՛ ռուսական, թե՛ վրացական կողմերի կիրառած ռմբակետիչ ռազմամթերքի հետևանքով:

ՕՏԱՐԱՄՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԶԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այդ դժբախտություններից և ոչ մեկը մեզ հետ չէր պատահի, եթե մենք այնքան օտարամոլ չլինեինք, և եթե մենք հետևած չլինեինք ոչ հույսին և ոչ էլ պարսիկին: ԲաժՖի

Վերջերս «Բիլլան»-ի վանածորի գրասենյակում էի՝ հեռախոսազանգերիս ամսական ամփոփագիրը վերցնելու համար: Տվեցին: Բայց... Աստված իմ, ամփոփագիրն անգլերեն էր: Երբ «Վեգա» ֆիրմայի խանութից մի շարք կենցաղային էլեկտրասարքավորումներ գնեցի, ստացա նաև համապատասխան տեխնիկական անձնագրերն ու երաշխիքային թերթիկները՝ անգլերեն, արաբերեն, բարեբախտաբար, մի մասն էլ՝ ռուսերեն: Իսկ ուր է մնում հայերենը:

Չկարծեք, թե դեմ եմ օտար լեզուների իմացությանը, դրանցով հաղորդակցվելուն: Բնավ: Լավ եմ հիշում հայկական առածանու գոհարներից մեկը՝ «Որքան լեզու գիտես, այնքան մարդ ես»:

Խնդիրը երկրի օրենքների նկատմամբ հարգանքն է: Չէ՞ որ ըստ օրենքի՝ օտարերկրյա արտադրության ապրանքների պիտակներն ու կից փաստաթղթերը գնորդին պետք է ներկայացվեն հայերեն թարգմանությամբ: Այդ պահանջը բխում է մայր օրենքից. Հայաստանի Հանրապետությունում պետական լեզուն հայերենն է:

Պատկերացնում եք, օրինակ, Մոսկվայում կամ Լոս Անջելեսում հայ գործարարն իր հաճախորդներին ներկայացնի հայերենով լրացված փաստաթղթեր: Հնարավոր չէ: Մինչդեռ մեզ մոտ դա հնարավոր է:

Խանութների, ռեստորանների, հասարակական հաստատությունների ցուցանակների մեծ մասն անգլերեն է. քչերն ունեն հայերեն համարժեքը: Ունահարված է ՀՀ Լեզվի պետական տեսչության որոշումն այն մասին, որ ցուցանակները պետք է լինեն հայերեն, ցանկության դեպքում՝ զուգակցված նաև այլ լեզուների համարժեքներով:

Այնուամենայնիվ, նման որոշումներն ու խախտումների համար նախատեսված տուգանքներն էլ քիչ բան են փոխում:

Այլ միջոցներ ևս հարկավոր են: Խոսքը հարկենաստանության, մարտենի լեզվի առժևորության գիտակցության վերականգնմանն ուղղված աշխատանքի մասին է: Հիշենք, որ մեսրոպյան ոսկեդարի լեզուն է շատ դեպքերում դարերի թոհուրթոհի,

կործանարար մրրիկների մեջ պահպանել հայոց ազգը:

Օտարամոլության մեկ այլ դրսևորման՝ հայ աղջիկների (մանավանդ՝ երևանում) «եվրոպական» հագուկապի մասին: Եվրոպայում վաղուց արդեն աղջիկներն այնքան «մերկ չեն հագնվում», ինչպես դա տարածված է մեզանում: Նայում են՝ պորտաբաց, լանջաբաց, մեջքն ու կոնքերը մերկացրած: Ոմանք այդպես են հագնվում առանց գիտակցելու, պարզապես մոդային տուրք տալով, իսկ նրանք, ովքեր դրանով «նպատակ» են հետապնդում, ըստ հոգեբանների, հակառակ արդյունք են ունենում: Տղամարդու աչքն այնքան է վարժվում նման «ցուցադրություններին», որ դրանց նկատմամբ դառնում է անտարբեր: Երբ նախամայր եվան ճաշակեց իմաստության խնձորն ու հասկացավ, որ մերկությունն անոթ է, ծածկեց իր մերկությունը: Ե՛րբ են հայ աղջիկներն էլ ճաշակելու իմաստության խնձորը:

Երբ նախկինում պատմում էին, որ Փարիզում կա մի փողոց, ուր անառակ կանայք գիշեր-ցերեկ «աշխատում են», զարմանում էինք: Այսօր, ցավով, քաղաքամայր Երևանը (և ոչ միայն) նման վայրերի պակաս չունի, որը միայն սոցիալական դժվարություններով բացատրելի ճիշտ չէր լինի: Առավել զայրացուցիչ է, որ այս ապականված ասպարեզը հավակնում են համարել նաև տղամեծեր:

Ծայրահեղականները մեզանում շատ են. կարող ենք սպունգի նման և՛ լավը, և՛ վատը ներծծելով սեփականել: Այդպես որոշ եվրոպամետ հայուհիներ «սեփականեցին» սերն ալկոհոլի և ծխախոտի նկատմամբ. սրճարաններում, ռեստորաններում սուրճի կամ կոնյակի գավաթով, ծխախոտի զլանակը շուրթերին աղջիկների «իդիլիկ» պատկերը եզակի չէ: Այդպի-

սիների համար հոգ չէ, որ ծխելու, խմելու վնասները սպառնալից հետևանքներ կարող են ունենալ հատկապես մայրանալ պատրաստվող կանանց համար: Ամերիկյան, եվրոպական շատ երկրներում հակածխախոտային լայնածավալ պայքար է ծավալվել, իսկ մենք բավարարվում ենք ծխախոտը հակագովազդելով... մանրատառերով:

Իսկ կենդանասիրությունը: Հայը միշտ էլ բնապաշտ է եղել, անգամ ընտանի կենդանիների համար հարմարավետ կացարաններ է կառուցել՝ նրանց պաշտպանելով ցրտից, տաքից և այլ վտանգներից: Մարդու լավագույն բարեկամ շունն իր բույնն է ունեցել տան մուտքի մոտ: Այսօր բակապան շները դրսում են կատարում իրենց «գործը», իսկ նրանց «էլիտար» ցեղակիցները մուտք են գործել մարդու բնակարան և հանգիստ ու փառավոր կյանք են վայելում տիրոջ ու նրա զավակների հետ:

Արևմուտքից ներմուծելով այս սովորությունը՝ ինչու՞ ենք մոռանում, որ ամեն ինչ իր տեղը պիտի ունենա: Ավելին, ինչու՞ ենք մոռանում հիգիենայի կանոնները: Միայն այն միտքը, որ մարդը շնուն է շան արտաշնչած օդը, զզվանք է առաջացնում: Էլ չեն ասում այն մասին (բժիշկները դա կհաստատեն), թե որքան հիվանդություններ կարող է ձեռք բերել մարդը շան հետ համատեղ բնակության հետևանքով: Իսկ տեսե՛լ եք, թե ինչպիսի սիրով են ոչ միայն երիտասարդները, այլև միջահասակ մարդիկ իրենց «էլիտար» բարեկամներին զբոսանքի ուղեկցում, ուտելիքի ամենահամեղ պատառը նրանց տալիս: Գուցե դրա փոխարեն խնամելին մի որբ կամ անապահով ընտանիքի երեխայի: Ես բնավ չեմ կարծում, թե պետք չէ հոգ տանել կենդանիներին, բայց նախ

մտածենք մարդու՝ առողջության մասին:

Օտարամոլությունը մեզանում ծաղկում ապրեց հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում: Անկախացումից հետո, փաստորեն, մեր երկրում ոչինչ չի իրականացվում առանց դրսի միջամտության, որը հաճախ պարտադրանք է վերածվում: Այո, մենք, որ 88-ի ազգային զարթոնքի օրերին երազում էինք ունենալ ազատ, անկախ Հայաստան, գնացինք ճիշտ հակառակ ուղղությամբ, անկախ մտածողության փոխարեն տիրապետող դարձավ օտարամոլությունը, հաճախ՝ ստրկամտությունը: Եթե նախկինում հաշվետու էինք միայն մոսկովյան Կրեմլին, այսօր այդ «ատյանների» թիվը բազմապատկվել է. մենք ամեն ինչ համաձայնեցնում ենք օտարների հետ: Մեզ բոլորն են փորձում դաս տալ: Երբեմն մտածում են՝ գուցե մեր անցյալի նվաճումները պարզապես առասպել էլ են եղել, գուցե մենք բոլորովին էլ աշխարհահռչակ ակադեմիա, աշխարհաճանաչ մեծություններ, աշխարհում եզակի արտադրատեսակներ չէ՞նք ունեցել:

Սեփական ազգային արժեքներն անտեսելով, երբեմն նույնիսկ արհամարհելով, մերժելով ուրիշները: Պետք է սթափվել: Հիշենք մեծ հայրենասեր, մտավորական ԲաժՖու՝ սույն հողվածի սկզբում որպես բնաբան բերված խոսքերը, որ հայ ժողովրդի անկումների պատճառների ճշգրիտ գնահատականն են: Հարկավոր է հիշել և խորհել: Խորհել և դասեր քաղել անցյալի պատմությունից, որ պատմության գալիք էջերում մոր դժբախտություններ չարձանագրվեն:

ՋԱՆԻԲԵԿ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԴՈԿՏՈՐ ԱՆԻ ՔԱԼԱՋՅԱՆԻ «ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ» ԼՂՅ-ՈՒՄ



Պատերազմից վիրավոր երկրամասի վերակենդանացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Լեռնային Ղարաբաղում: Դրանց շարքում ուշագրավ է Նյու Յորքի համալսարանի դոկտոր Անի Քալաջյանի կողմից իրագործվող «Մտավոր առողջության վերականգնման» ծրագիրը:

Ծրագրով Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում ստեղծվել է «Հակամարտությունների կարգավորման կենտրոն», ուր կազմակերպվում են վերականգնողական դասընթացներ:

Լեռնային Ղարաբաղի վիճահարույց տարածքներով անցնելիս զգում ես, որ դեռևս տիրական է ետպատերազմյան շրջանին բնորոշ մոայլությունը, իսկ ամենայն փողոցներն ու կիսավեր տների անխախտ լուռությունը ճնշում են մարդու հոգին:

Ձիմադադարից 14 տարի անց այս տարածքներում Բաքվից եկած փախստականները շարունակում են կրել դժվարին օրերին ապրած ուժգին ցնցումների հետևանքները: Պատերազմի ավարտից հետո մի շարք կազմակերպություններ փախստականներին միջոցներ տրամադրեցին վերականգնելու իրենց տնտեսությունը: Դեռևս փոքր է իրականացվող շինարարական աշխատանքների ծավալը, քանզի այնքան էլ մեծ չէ ցանկությունը բնակություն հաստատել մի վայրում, ուր խաղաղ կենսապայմանների հեռանկարը մշուշոտ է:

ԱՆԻ ՔԱԼԱՋՅԱՆ

ՆԱՐԱԿԻՅ ՄԱՄՈՒԼԻՅ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՋԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ, ԹԵ՞ ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորագրի ներքո այս անգամ տպագրում ենք Մարիամ Մուրդույանի «Նա, ով մարդ է դառնալու, արդեն մարդ է» վերնագրով («Հիուսթյան արհեստական ընդհատում. մարդասպանություն», թե՛...) հոդվածից («Ազգ», 2008 թ. հոկտեմբերի 4) որոշ ուշագրավ հատվածներ, որոնք ակնհայտորեն ցույց են տալիս, որ հիուսթյան արհեստական ընդհատման հետևանքով մարդկային կյանք է կործանվում:

«Այսօր չկա որևէ պետական մարմին, որը դրա համար որևէ տույժի ենթարկի մորը կամ ընդհատումն իրականացնող բժշկին: Մինչդեռ այդ մասին հնում Հայոց կանոնագրում ասվել է. «Իսկ ովքեր չար դեղերով սպանում են մանուկներին որովայնում և արգանդը դեղերով կապում են հաճախակի պոռնկամալու համար և տղամարդուն ու կնոջը միմյանց ատելի դարձնում պակաս ընթացքում, արժան է, որ քահանան կարգի ու ապաշխարության բերի: Եվ եթե նույն մոլորության մեջ մեռնի, ապա չար կլինի նրանց մահը: Թող զրկվեն սուրբ օրենքներից և քրիստոնյաների շարքում չթաղվեն»: Նման օրենքները վերացվեցին 1917 թվականից հետո միայն: Այսօր անգամ խրախուսվում է հիուսթյան արհեստական ընդհատումը:

Եթե բժիշկների և օրենսդիրների մեծ մասը պտուղը մարդ չի համարում, ապա ըստ Հայ առաքելական եկեղեցու՝ պտուղը բեղմնավորման

պահից սկսած ունի հոգի, ուստի հիուսթյան արհեստական ընդհատումը մարդասպանություն է: Դրանում հավասարապես մեղավոր է և բժիշկը, և մայրը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Վարդապետ Քոչարյանը նշում է, որ առավելագույն հանցանքը կրում է հենց մայրը, քանի որ վերջինս անարգում է ոչ միայն մայրության շնորհը, իր մարմինը, այլև սպանում է իր մանկանը: «Կյանքն սկսվում է սաղմնային վիճակում՝ բեղմնավորման պահից սկսած: Ինչպես՝ կարող է մարդ չլինել, եթե օրեցօր սաղմը փոփոխությունների է ենթարկվում, զարգանում, այսինքն՝ ապրում է: Բացի այդ, կինն անարգում է նաև իր մարմինը, ինչը դատապարտելի է ոչ միայն եկեղեցու տեսանկյունից, այլև մարդկային առումով»: Վ. Քոչարյանը պատմում է, որ դեռևս երկրորդ դարում հոգևոր հայր Տերտուլիանոսն ասել է. «Նա, ով մարդ է դառնալու, արդեն մարդ է»:

Հիմա, սակայն, եկեղեցու կարծիքն առանձնապես հաշվի չի առն-



վում: Կանանց մեծ մասը, ովքեր դիմում են այդ քայլին, սաղմը մարդ չեն համարում, ոչ էլ իրենց մարդասպաններ:

Նշենք, որ ամերիկացի բժիշկ-գինեկոլոգ Բերնարդ Նատանսոնը, որ 1000-ից ավելի հիուսթյան արհեստական ընդհատում էր կատարել, հետագայում նկարահանեց ուլտրաձայնային ֆիլմ, որտեղ ցույց էր տալիս, թե ինչ է կատարվում մոր արգանդում պտղի հետ՝ հիուսթյան արհեստական ընդհատման ժամանակ: Հայտնի է, որ ֆիլմի ցուցադրությունից հետո շատ բժիշկներ մեկընդմիջտ հրաժարվել են արհեստական ընդհատում կատարելուց:

ՄԱՐԻԱՄ ՍՈՒՂՈՒՍՅԱՆ «Նա, ով մարդ է դառնալու, արդեն մարդ է» «Ազգ», 2008 թ. հոկտեմբերի 4

ՆՈՐԱՅՐ ԽՐԻՍՅԱՆ

Ամառվա տապից հոգնած կեսգիշերային Մուշը պատրաստվում է քնելու, սակայն քաղաքի կենտրոնական պողոտայում խոյացող հյուրանոցի վերին հարկից՝ բացօթյա ռեստորանից, գիշերային լուսության մեջ տարածվում են հայկական ժողովրդական երաժշտությունը և պարեղանակները: Հայաստանից ժամանած ճամփորդները կարծես մոռացել են օրվա գլխավոր իրադարձությունների պատճառած ֆիզիկական հոգնածությունը և Մշո սուրբ Կարապետից ու

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

խմբի թուրքագետ ղեկավարը՝ դրսևորելով ճկուն ժողովրդական դիվանագիտություն: Առաջինը, որ նկատում ենք ճանապարհորդներս, մուտք գործելով Թուրքիա, բնության նկատմամբ պետական հոգատարությունն է, որն արտահայտվում է անտառների տնկարկներով, քաղաքամերձ

քով պահպանվի ու ծառայի զբոսաշրջության զարգացմանը:

Կարսում Հայաստանից ժամանած ճամփորդներն առաջինը դիտում են հայկական շինությունները, այդ թվում՝ Չարենցիկ վերագրվող տունը, վերանորոգված Առաքելոց եկեղեցին, որը գործում է որպես մզկիթ, սակայն, զարմանալիորեն, ուղեցույցներում ներկայացվում է իր՝ հայկական անվամբ:

Այսօր թերևս համապետական մակարդակով ուշադրության է արժանանում Անիի հուշարձանների ողջ համալիրը՝ Կարս-Անի լայնահուն ճանապարհի կառուցմամբ, Սմբատյան բերդապարիսպների մասնակի վերանորոգմամբ, համապատասխան ուղեցույցների, բացատրական ցուցանակների, մեծաթիվ հսկիչների և այլ աշխատողների առկայությամբ և այլն: Նույնպիսի խնամված պատկեր է Վանի միջնաբերդում և նրա շրջակայքում: Այստեղ պատմական ու ուսանելի համադրված են ժամանակակից հանգստի կազմակերպմանը՝ բլրի ստորոտին ստեղծված հանգստի գոտու տարածքում: Հատուկ խնամքի են արժանանում Վանի թագավորության Արգիշտի և Սարգուր Առաջին արքաների սեպագիր արձանագրությունները: Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բարեկարգման մասին շատ է գրվել մեր մամուլում:

«Պահպանվում է պետության կողմից» վերտառությամբ վահանակներ, որոնք կիրառվում են Հայաստանում դեռևս խորհրդային ժամանակներից, այստեղ չեն տեսնի, սակայն պահպանությունը գործնականում իրականացվում է հենց Սբ. Խաչի և Անիի հուշարձանների հանդեպ: Ցավոք, նույնը չենք կարող ասել Արևմտյան Հայաստանի այլ վանքերի ու հուշարձանների առջնությունը: Այսպես, Վարազ

գա լեռան լանջին՝ այժմ թուրքաբնակ գյուղում գտնվող Վարազավանքն արտաքուստ ավերակ է հիշեցնում. գողացված են սրբատաշ քարերը: Տարիներ առաջ արքեպիսկոպոս Աշխարհի հորդորով և հովանավորությամբ տեղացիները մաքրել են եկեղեցու ներսը՝ դրանով ապահովելով իրենց փոքրիկ բիզնեսը (մոմի և ձեռագործ իրերի վաճառք): Նրանք գիտակցում են, որ իրենց գործի հաջողությունը պայմանավորված է մեծաքանակ հայ ճանապարհորդների այցելով, ուստի փորձում են տարածքը բարեկարգել: Տա՛ Աստված:

Մեր այցելած քաղաքներում բոլոր բերդերը, չնայած հայկական ծագմանը, այսօր հիմնականում վերակառուցվում են մուսուլմանական մշակույթի տարրերի ներմուծմամբ՝ ընդհուպ մինչև եկեղեցիները մզկիթների վերածելով: Դա ակնառու էր թե՛ Էրզրումում, թե՛ Բայազետում՝ Դա-

ցինք հավաքել վանքի պատի մոտ: Մոմ ու խունկ վառեցինք, աղոթեցինք, արտասվեցինք ու միաժամանակ ըմբռնեցինք Մշո դաշտի գեղեցկությունը, հիշեցինք հայտնի պատմությունները...

Ավելի հուզիչ, թերևս սահմանեցուցիչ տեսարան բացվեց Մշո Սուրբ Կարապետ վանք այցելության ժամանակ: Հայտնի վանքից պահպանվել են երկու մեծ քարակույտ և անթիվ խաչքարեր ու զարդանախշ քարեր՝ քրդական գյուղի տների պատերին: Չայրույթն է պատում բոլորիս, հետո հուզմունքը միախառնվում է մեր այժմյան անկարողությանը...

Ասում են՝ տեղական իշխանությունները, ելնելով իրենց տնտեսական շահերից, առաջիկայում կբարեկարգեն դեպի Սուրբ Առաքելոց տանող ճանապարհը, խապառ փլուզումից կփրկեն վանքը, և Սուրբ Կարապետի հետ միասին այդ երկու ուխտատեղիները կդառնան Մշո շրջանում զբոսաշրջիկների համար այցելության վայրեր, ինչպես Անի կամ Արածանի գետի վրա վերականգնված, նույն Մուշից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սուլուխի կամուրջը, որը նույնպես պահ-



Մշո Առաքելոց վանքի

Առաքելոցից ոգեղեն լիցքեր ստացած՝ երգում են ու պարում: Հայերի հետ պարում են հյուրանոցի թուրք և քուրդ աշխատակիցները: Բոլորս պարում ենք «Լորկե»: Աստված իմ, սրանք նույն հողի ու ջրի մարդիկ են, և պարեղանակը բոլորիս է հարազատ: Ներս է մտնում հյուրանոցի տերը՝ բարեսես մի մարդ, ինչ-որ բան է հայտնում խմբի ղեկավարին, ով համաձայնության մշաններ է ցույց տալիս: Եվս մի քանի վայրկյան, և ռեստորան են մտնում հուզախառն, ապշահար դեմքերով մի խումբ մարդիկ.

- Օո՛, հա՛յ եք, ուրկե՛ եկած եք, ամբողջ Մուշը հայկական երգի մեջ է, փողոցն լսեցինք և պանդուխտի տիրոջն խնդրեցինք բարձրանալ:

Ակամա գրկախառնվում ենք: Պարզվում է՝ Բեյրութից ժամանած հայերի խումբ է, հավաքվել են Ավստրալիայից, Կանադայից, ԱՄՆ-ից... Էրգիր գալու: Սփյուռքահայերը Սիրիայով անցել են Թուրքիա, շրջագայել Կիլիկիայում, Սասունում և պատրաստվում են այցելել Արևմտյան Հայաստանի տեսարժան վայրերը: Աշխարհն ինչքա՛ն է փոքրացել... Մեր ուրախությունը շարունակվում է, պարում ենք, երգում: Հայրենի հողի կանչն է հավաքել բոլորիս: Չենք թողնում, որ Մուշը քնի...

Մեր երթուղին ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի «ոսկե օղակը»՝ Կարս, Անի, Իգդիր, Բայազետ, Վան, Բիթլիս, Մուշ, Էրզրում, Բասեն, Արդահան: Ճանապարհորդության ընթացքում անենուրեք մեր իմացությունը լրացնում էր

տարածքներում նոր անտառապուրակների ապահովմամբ և, որ անենակարևորն է, ճանապարհորդների համար՝ բնության հուշարձանների շրջակայքում (Բերկրիի ջրվեժ, Նեմրուք լեռան խառնարան և այլն), համապատասխան սպասարկման կառույցների առկայությամբ: Զբոսաշրջության զարգացման համար արվում է ամեն ինչ՝ հատկապես բարձրակարգ ճանապարհաշինություն:

«Ոսկե օղակում» ընդգրկված հուշարձանների մեծ մասը, բնականաբար, հայկական ծագում ունի, որին, ցավոք, փորձ է արվում իսլամական երանգ հաղորդել: Ինչպես երևում է, Թուրքիան հայկական ճարտարապետական հուշարձանների նկատմամբ որդեգրել է նոր քաղաքականություն, որն այսպես կարելի է ձևակերպել. «Այն ամենը, ինչ ստեղծվել ու կառուցվել է այժմյան Թուրքիայի տարածքում, անկախ ծագումնաբանությունից, Թուրքիայի հարստությունն է և պետք է խնամ-



Վարազավանքի արտաքին տեսքը



Սիվան սարը՝ Վանա լճից

րոհների ամրոցի վերակառուցներում:

Էրզրումի՝ նախկինում հայ կաթոլիկների եկեղեցին ժամանակին նույնպես վերածվել է մզկիթի՝ երկու միմարթների հավելումով, սակայն այժմ գործում է որպես բաց թանգարան: Այստեղ անպայման այցելում են քաղաքի բոլոր հյուրերը՝ նույնիսկ չենթադրելով, որ այդ շքեղ կառույցի հեղինակները հայերն են: Հարևան Հայ Առաքելական եկեղեցին այժմ վերակառուցվում է որպես մզկիթ...

Մշո Առաքելոց վանք այցելությունը հիշեցնում է 4-ժամյա լեռնագնացություն, ավելի ճիշտ՝ ուխտագնացություն, և եթե չլիներ հոգեկան պահանջը՝ տեսնել հայոց սրբազան վայրերից մեկը, միզուցե շատերը չհաղթահարեին բարձունքը: Ցավոք, Առաքելոցը նույնպես «մերկացած է» սրբատաշ քարերից: Ցիրուցան մի քանի խաչքարերը փորձե-

պանվում է պետության կողմից համապատասխան ծառայությամբ:

Եթե վերը նկարագրված հուշարձանների մասին այս կամ այն կերպ լսել էինք հայտնի պատմություններից, ապա մի աննկարագրելի հիացմունք և հուզմունք ապրեցինք Դերջանի շրջանում՝ Ապրանից վանական համալիր այցելության ժամանակ: Վերելքը հաղթահարեցինք ոտքով՝ չնայած լեռնային ճանապարհի առկայությանը: Համալիրը դիրքով այնքան հոգեհարազատ էր հայաստանցիներին, որ շատերս ականա զուգահեռներ էինք փնտրում այս վանքի ու Հավուց Թառի (Ազատ գետի ափին), մեկը՝ Գնդեվանքի (Արփայի ձորում), մյուսը՝ Տաթևի անապատի (Որոտանի ձորում) հետ: Իսկ ներքևում սարյանական կտավ հիշեցնող Դերջանի դաշտերն են: Իսկական հայկական բնանկար է:

ԱՌՈՐՅԱ ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ

ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐՆ ԱՅՍՈՒՅԵՏԵՎ ԿԱՐՈՂ ԵՆ ԶԱՇՎԱՌՎԵԼ ՈՐՊԵՍ ՌԻՍԿԱՅԻՆ

ՀՀ Արդարադատության նախարարի հրամանը 2008 թ. մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանում լրացում կատարելու մասին (2008 թ. սեպտեմբերի 16)

Հ Ա Տ Վ Ա Ց Ն Ե Ր

ՍՈՑԻԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԶԱՏՎՈՐԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՊԱՏԱՊԱՐՏՆԱԼՆԵՐԻ ՀԵՏ

66. Ռիսկային են համարվում այն կալանավորված անձինքն և դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշում և պատիժը կրելուց հետո կարող են վտանգավոր լինել հանրության համար:

67. Կալանավորված անձը և դատապարտյալը ռիսկային հաշվառման է վերցվում և հաշվառումից հանվում է հիմնարկի պետի որոշմամբ՝ անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական, իրավական, բժշկական սպասարկման բաժինների կողմից տրված եզրակացությունների հիման վրա: Ռիսկային հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու վերաբերյալ որոշումները կցվում են կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին:

68. Կալանավորված անձինքն և դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա է փախուստի, ինքնավնասման, ալկոհոլի կամ թմրամիջոցների օգտագործման, ագրեսիվության և կռվազանության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների որևէ հակում:

1) Կալանավորված անձին և դատապարտյալին որպես փախուստի հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝ ա. նախկինում կատարած փախուստի փորձի կամ փախուստի փաստի վերաբերյալ գրառումները անձնական գործում:

բ. անվտանգության ապահովման բաժնի կողմից տրված եզրակացությունը:

2) Որպես ինքնավնասման հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. մինչև 1 տարվա ընթացքում երկու և ավելի անգամ ինքնավնասման փորձի կամ փաստի վերաբերյալ գրառումները անձնական գործում:

բ. հոգեբանական եզրակացությունը:

3) Որպես ալկոհոլի, թմրանյութերի օգտագործման հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. դատավճռով տրված հարկադիր բուժման մասին որոշումը:

բ. բժշկական եզրակացությունը:

գ. մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկվելը:

4) Որպես հանցածին դիրքորոշում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. մինչև 6 ամսվա ընթացքում երկու և ավելի կարգապահական խախտումների առկայությունը:

բ. հոգեախտորոշմամբ ագրեսիվության բարձր ցուցանիշը:

գ. անձնական գործում առկա առանձին դաժանությանը կամ բռնությանը կատարված հանցագործության մասին տեղեկատվությունը:

5) Որպես հանցածին դիրքորոշում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝

ա. նախկինում դիտավորյալներ կատարված ծանր և առանձնապես ծանր երկու և ավելի հանցագործությունները:

բ. հիմնարկում մոլեխաղերի դրդելու, կազմակերպելու գործողությունները:

գ. անվտանգության ապահովման բաժնի տեղեկատվությունը:

69. Կալանավորված անձը և դատապարտյալը որպես ռիսկային հաշվառում ունեցող հաշվառվում է հատուկ մատյանում, կալանավորված անձի և դատապարտյալի անհատական քարտում սահմանվում և իրականացվում են ռիսկայնության նվազեցման աշխատանքները ըստ հակումի տեսակի:

70. Փախուստի հակում ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել հաշվառվելուց առնվազն 2 տարի հետո, եթե կատարված աշխատանքների արդյունքում նրանց ռիսկայնության աստիճանը նվազել, և առկա է վարքագծի դրական փոփոխություն:

71. Ինքնավնասման հակում ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել, եթե նրանց նկատ-



մամբ կատարված աշխատանքները տվել են դրական արդյունք, և պատիժը կրելու 1 տարվա ընթացքում նրանց կողմից չի կատարվել ինքնավնասում կամ ինքնավնասման փորձ:

72. Ալկոհոլի, թմրամիջոցների օգտագործման հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել համապատասխան բուժում ստանալուց հետո 1 տարվա ընթացքում, ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում:

73. Ագրեսիվության հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել, եթե 1 տարվա ընթացքում կարգապահական խախտումներ թույլ չեն տվել, և ագրեսիվության աստիճանը նվազել է:

74. Հանցածին դիրքորոշում ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել, եթե կարգապահությունը և ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են բարձր, իսկ ռիսկայնության աստիճանը՝ ցածր:

ԽՄԲԱԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ. ՀՀ Արդարադատության նախարարի N 120-Ն հրամանով կալանավորներն այսուհետև կարող են հաշվառվել որպես ռիսկային որպես փախուստի հակում ունեցող, ինքնավնասման հակում ունեցող, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործման հակում ունեցող, ագրեսիվության հակում ունեցող, հանցածին դիրքորոշում ունեցող անձինք: Արդյո՞ք նման որակումները համահունչ են մարդու իրավունքների սկզբունքներին, գաղափարներին: Կա՞ն արդյոք որոշումն արդարացի կիրառելու երաշխիքներ: Սպասում ենք պաշտոնական արձագանքի:

ՄՍՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՅՈՒՇԱԳԻՐ

ԿԳ նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Կրթության ազգային ինստիտուտի միջև ստորագրվել է հանրակրթության ոլորտում հանդուրժողականության ուսուցման և խթանման մասին փոխըմբռնման հուշագիր: Այն հիմք կհանդիսանա հանդուրժողականությունը խթանող գործունեության ոլորտում ՄԱԶԾ և ԿԳ միջև համագործակցության համար ապահովելով հանրակրթության ոլորտում այդ առումով դաստիարակչական աշխատանքների իրականացումը:

«Մշակույթների և քաղաքակրթությունների խաչմերուկում ապրող մեր ժողովրդին բնորոշ է հանդուրժողականության արժեհամակարգը՝ որպես ժամանակակից աշխարհում

մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսությունն ապահովող ազգի: Այն կարևորվում է նաև նոր իրողությունների՝ քաղաքացիական հասարակության կայացման տեսանկյունից», - հուշագրի ստորագրման հանդիսավոր արարողության ժամանակ ասել է ԿԳ նախարար Սպարտակ Սեյրանյանը:

«ՄԱԿ-ը ձգտել է մշտապես խթանել հանդուրժողականությունն ուսուցման միջոցով, քանզի սպառա սերունդը, որը դաստիարակվում է դպրոցում, պետք է ունենա համագործակցելու, հասարակության մեջ տարբեր մտեցումներով մարդկանց հետ բաց հաղորդակցվելու վերաբերմունքը», - նշել է ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ-ի մշտական

ներկայացուցիչ Կոնստելո Վիդալը:

ԿԱԻ տնօրեն Նորայր Ղուկասյանի տեղեկացմամբ՝ հուշագրի շրջանակում իրականացվելիք քայլերը կլրացնեն հանրակրթական համակարգում դաստիարակչական աշխատանքների բաղադրիչը: Համապատասխան մեթոդաբանություն կկիրառվի նաև 12-ամյա հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի լրամշակման ընթացքում: «Առանձին դասաժամ կամ առարկա այս առումով չի ներմուծվելու, պարզապես նշված ուղղությամբ աշխատանքն առավել կկառուցվի», - ասել է Ն. Ղուկասյանը:

Էջ 4 ← ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրանից վանական համալիրը յուրահատուկ է իր վեցմետրանոց զույգ խաչքարերով (ըստ մասնագետների՝ հայկական լեռնաշխարհում բացառիկ) և իր առանձնահատուկ ոճով կարող է դասվել հայկական խաչքարերի գլուխգործոցների շարքը: Ուրախալի է, որ վանքի ներսում մետաղե հեծաններով ամրացվել են սյուները, սակայն գանձախույզները փորել են վանքի ներսի տապանաքարերի տակ՝ լրջորեն վտանգելով շինության ամրությունը: (Այդ «գանձախույզներն» անշուշտ չգիտեն, որ հայ վանականների շիրիմները եզրափակված փարավոնների դամբարաններ չեն, և հայերը թանկարժեք իրերով թաղումներ չեն կատարել):

Այժմյան թուրքիայի արևելյան շրջաններում բուռն քաղաքաշինություն և ճանապարհաշինություն է ընթանում: Այդ քաղաքները վաղուց չեն ապրում հայկական կյանքով, լավագույն դեպքում պահպանվել են նրանց նախկին անունը, հատուկներտ հուշարձան-մատուցներ, ինչպես օրինակ՝ Կարսում՝ Չարենցի հայրական տունը, անցյալ դարակազմից մնացած բնակելի տներ, (որոնց նմանները միայն Գյումրիում կարելի է տեսնել), Էրզրումում՝ Սանասարյան վարժարանը՝ քաղաքապետարանի շենքի վերածված և այլն: Եվրոպական մեքենաների առատությունը և նոր բնակելի բարեկարգ թաղամասերը Վանում, Մուշում, Կարսում, Էրզրումում աչք են շոյում:

Չզացվում է պետության նպատակալից հովանավորությունը՝ այդ քաղաքները ճանապարհորդական կենտրոն-հանգրվաններ դարձնելու առումով: Յուրաքանչյուր քաղաք, ինչպես ընդունված է զարգացած երկրներում, ունի իր խորհրդանշանը (օրինակ՝ Վանում՝ Վանա կառույց, Մուշում՝ կակաչը...):

Շփումներ տեղի բնակչության հետ նախատեսված չէին, սակայն հանպատաստից գրույցներն ու երկխոսություններն անսպառ էին: Թուրք երիտասարդներին հատկապես հետաքրքրում էր, թե ինչպես իրենք կարող են շրջագայել Հայաստանում, արդյո՞ք վտանգավոր չէ Հայաստանում ազգությամբ թուրքի համար, ի՞նչ լեզվով կարող են հաղորդակցվել մեզ հետ և այլն: Հայ-թուրքական 90-ամյա փակ սահմանը մեզ շատ է հեռացրել միմյանցից... Իսկ քրդերն ամենուր հպարտությամբ են նշում իրենց ինքնությունը, որ թուրքիայի արևելքում իրենք գերակշռող մեծամասնություն են կազմում, իսկ քրդացած հայերի քանակը, որքան էլ զարմանալի է, ըստ նրանց, մի քանի միլիոն է: Մուշի Սբ. Մարինե ավերակ եկեղեցու շրջակայքում հանդիպեցինք քրդացած հայերի, ովքեր Մեծ եղեռնի բոլոր տառապանքները տեսած սերնդի հետնորդներն են:

Վերջաբանի փոխարեն: Անհում, երբ մեր շրջագայությունը մոտենում էր ավարտին, ականատես եղանք հետևյալ իրողությանը. ուսանողների մի խումբ կլանված լսում էր հավանաբար իրենց ղեկավարի տպավորիչ ելույթը, իսկ մեր խումբը Արմեն Չուխաջյանի հայտնի քայլերով կատարելով որոշեց նրանց շրջանցել: Բնականաբար, նրանց ուշադրությունը սևեռվեց մեզ վրա, և ակնա հետաքրքրվեցին մեզանով: Ջարմացան իմանալով, որ Հայաստանից ենք: Պարզվեց, որ իրենք Անկարայի համալսարանի ուսանողներ են, եկել են Անի տեսնելու: Հիացած Անիի տպավորիչ ավերակներով՝ հանկարծ հանդիպում են Անի կառուցողների երգող ժառանգներին... Հետաքրքրվում են այսօրվա Հայաստանով. կարո՞ղ են արդյոք իրենք էլ ազատ շրջագայել Երևանում, սովորել մեր բուհերում, գալ Երևան՝ ֆուտբոլ դիտելու և այլն: Մենք շտապում ենք, ժամանակը սուղ է, իսկ իրենք շարունակ հարցեր են տալիս: Հասցեներ ենք փոխանակում: Անիի ավերակների մասին չենք խոսում. ամեն ինչ պարզ է: Իսկ թե ուր անհետացան Անիի իրական տերերը, այս կրթյալ ուսանողները վաղ թե ուշ իրենք կասեն: Անի, թեկուզ ավերակ, «ասում է» ավելին, քան բարձրաձայնում են:

Հեռանում ենք Արևմտյան Հայաստանից թե՛ տխրության, թե՛ արժանապատվության և թե՛ կարոտի զգացումով առեցնում, իսկ «նոր Անի»՝ հայոց մայրաքաղաք Երևանը տեսնել բոլոր ցանկացողներին ասում ենք՝ **ԲԱՐԻ ՉԱԼՈՒՄ:**

ՆՈՐԱՅՐ ԽՐԻՄՅԱՆ
Երևանի թիվ 65 միջնակարգ դպրոցի տնօրեն
2008 թ. հուլիս



ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԵՏՐՈՍՅԱՆՆԵՐԻ ԿՐԿԵՍԱՅԻՆ ԴԻՆԱՍՏԻԱՆ

Կրկեսը հնագույն արվեստներից է: Դեռևս վաղ անցյալում Եգիպտոսի, Հունաստանի, Հնդկաստանի, Չինաստանի, Հայաստանի քաղաքների հրապարակներում տոնական օրերին ժողովրդին զվարճացնում էին լարախաղացները, անպարարները, կենդանավարժները, կրկեսային մարմնամարզիկները...

1956 թ. ձևավորվեց Երևանի կրկեսի անձնակազմը, իսկ 1958 թ. կառուցվեց նաև կրկեսի նոր շենքը: Այստեղ ելույթներ են ունեցել կրկեսի ճանաչված արտիստներ՝ լարախաղաց Վ. Արզումանյանը, տաղանդավոր ծաղրածու Լ. Ենգիբարյանը, կենդանավարժ Ա. Իսահակյանը: Հյուրախաղերով Երևանի կրկեսում հանդես են եկել շատ ստեղծագործական խմբեր:

Ծննդյան 60-ամյակի և Երևանի կրկեսի շենքի կառուցման 50-ամյակի առիթով Մարինե Մխիթարյանը գրուցել է Երևանի կրկեսի տնօրեն և գեղարվեստական ղեկավար, միջազգային մրցույթների դափնեկիր արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Սոս Պետրոսյանի հետ:



Մարինե Մխիթարյան – Պարոն Պետրոսյան, պատմությանը հայտնի են կրկեսային ամբողջ շարք դիմատիպներ՝ Դուրովների, Չապաչևու, Բաղդասարյանների... Ձեր ընտանիքի բոլոր անդամներն աշխատում են կրկեսում: Կարո՞ղ ենք խոսել Պետրոսյանների կրկեսային դիմատիպի մասին...

Սոս Պետրոսյան – Իսկապես, մեր ընտանիքի բոլոր անդամներն աշխատում են կրկեսում: Որդիս՝ Սոս Պետրոսյանը, և կինը՝ մասնագիտությամբ իրավաբան Վիկտորիան, Լոնդոնյան հեղինակավոր մի մրցույթում Գինեսի մրցանիչ սահմանեցին՝ գրանցվելով որպես «Աշխարհում ամենաարագ զգեստափոխվող» երկու րոպեում հաջորդաբար փոխելով 16 զգեստ: Կինս (մասնագիտությամբ երաժիշտ) զբաղվում է նրանց բեմական հագուստների պատրաստման աշխատանքով: Դուստրս՝ Նաիրան, ով Եվրոպայի լավագույն անագիտությանը է, մեր կրկեսի ռեժիսոր-բեմադրիչն է, Ենգիբարյանի անվան կրկեսային ստուդիայի ղեկավարը, միակ կին կենդանավարժը: 2004 թ. ստեղծելով «Կենդանիների աշխարհում» տեսարանը՝ որդու՝ Յրաչիկի հետ 40 կենդանիների վարժեցմամբ է զբաղվում: Թոռս՝ Սոս երրորդը, ձեռնածուների Եվրոպայի չեմպիոն է: Բեմում աշխատում է ծնողների և եղբոր՝ Տիգրանի հետ:

Ս. Ս. – Ինչպե՞ս պատահեց, որ Ձեր տղային և թոռանը ևս Սոս անվանակոչեցիք:

Ս. Պ. – Տղայիս այդպես անվանակոչեցի Ենգիբարյանի խորհրդով՝ որպես Սոս երկրորդ, իսկ թոռանս կնքսիայրը Յուրի Նիկոլինը եղավ:

Ս. Ս. – Սոս Պետրոսյան ավագն ինչպե՞ս է մուտք գործել կրկեսի հեքիաթային աշխարհը:

Ս. Պ. – Ծնվել, մեծացել եմ Թիֆլիսում: Փոքր հասակում հաճախ տարօրինակ բաներ էի անում՝ մարդկանց ուշադրությունը ինձ վրա բեռելու համար: Օրինակ, երբ ինձ ուղարկում էին հաց գնելու, տուն էի վերադառնում հացը քթիս դրած: Այդ շրջանում արդեն ինձ հաջողվել էր հորինել մի քանի հնարքներ:

Առաջին անգամ բեմ էլա Գիքորի դերը կատարելու, երբ սովորում էի Թիֆլիսի հայկական թատրոնին կից ստուդիայի հինգերորդ դասարանում: Առաջին անգամ կրկեսային ելույթ ունեցա վեցերորդ դասարանում: Ճակատիս վրա պահելով ջրով լի 70 բաժակներ՝ միաժամանակ խաղում էի զնդակներով:

«Ճանապարհի դեպի կրկես» շարժակարի դիտումն ինձ համար վճռորոշ դեր ունեցավ. շուրջ հարյուր անգամ դիտեցի ու սիրահարվեցի կրկեսին:

Մի անգամ, երբ իմացանք, որ հանրահռչակ Լեոնիդ Ենգիբարյանն իր դերասաններով հյուրախաղերի է եկել Թիֆլիս, հայրս ինձ տարավ նրա մոտ: Ենգիբարյանը հիացմունքով դիտեց հնարքներս և խորհուրդ տվեց սովորել Մոսկվայի էստրադային-կրկեսային ուսումնարանում: Երեք տարի շարունակ փորձեցի ընդունվել այդ ուսումնարանը, բայց ապարդյուն: 1966 թ. վերջապես հաջողվեց ընդունվել ուսումնարան, ուր համակուրսեցիներս էին Ալլա Պուգաչովան, Գենադի Խազանովը, Յուրի Կուկլաչովը, Անատոլի Մարչևսկին և ճանաչված այլ դեմքեր: Ավարտական դիպլոմային աշխատանքս հայկական երաժշտության ներքո հայտնի «Դողմերով համարն» էր: Ելույթից հետո Ենգիբարյանն ինձ հրավիրեց հայկական կրկեսային խումբ: Այս երկրորդ ճակատագրական հանդիպումով սկսվեց իմ գործունեությունը կրկեսում:

Ենգիբարյանի մահից հետո որոշ ժամանակ թողեցի կրկեսը: Հետո նորից վերադարձա...

Ս. Ս. – Էլ ու՞ն եք համարում Ձեզ ուսուցիչ:



Սոս Պետրոսյան երկրորդ կնոջ՝ Վիկտորիայի հետ



Ս. Պ. – Ռեժիսուրայի և բեմական վարպետության ուսուցիչս Կիմ Արզումանյանն էր, տաղանդավոր ու նրբանկատ մի անձնավորություն, ում շնորհիվ մուտք գործեցի մի նոր աշխարհ՝ թատերական գարնանահրաշ աշխարհը...

Ս. Ս. – Ապագա մասնագետների պատրաստման ուղղությամբ ի՞նչ եք անում:

Ս. Պ. – Կրկեսին կից ստեղծվել է կրկեսային ստուդիա, որի ուսանողների պատրաստած լավագույն համարները ներկայացվում են կրկեսի բեմում:

Ս. Ս. – Ծնորհակալություն հարցազրույցի համար: Ձեր ստեղծագործական անձնակազմին մաղթում ենք նորանոր հաջողություններ:

ՄԱՐԻՆԵ ՄՄԻԹԱՅԱՆ
դերասանուհի, ԵԹԿՊԻ դասախոս

«Իրավական մշակույթ» թերթի խմբագրությունը և շնորհավորում է վաստակաշատ արտիստին ծննդյան 60-ամյակի առթիվ՝ մաղթելով ամուր առողջություն, ստեղծագործական անսպառ եռանդ և գործունեության հետագա բարգավաճում:

ՄՇԱԿՈՒՅԹ-ԱՅԻՆ ԼՐԱՔԱԴ

Ուժի մեջ կմտնի Ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության համաձայնագիրը



2009 թ. հունվարի 2-ին ուժի մեջ կմտնի Ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաձայնագիրը, որն արդեն վա

վերացվել է 20 երկրների կողմից: Համաշխարհային օվկիանոսը հարուստ է բազմազան մշակութային ժառանգության «շտեմարան» է, որի խորքերում պահպանվում են հազարավոր խորտակված նավեր և արվեստի ու պատմության հուշարձաններ: Դրանց թվում են Ալեքսանդրիայի փարոսի և Կլեոպատրայի պալատի (Եգիպտոս) ավերակները, հնագույն Կարթագենի մի մասը (Թունիս), 1692 թ. երկրաշարժի հետևանքով ավերված արքայական նավահանգիստը:

Համաձայնագիրը կոչված է պահպանելու ստորջրյա մշակութային ժառանգությունը՝ թույլ չտալով, որ արվեստի նմուշները դառնան զանձեր որոնողների ավար:

Համաձայնագրի նպատակն է նաև պայմաններ ստեղծել, որ հանրության համար մատչելի դառնա ջրի տակ հայտնված մշակութային ժառանգությունը, և արդյունավետորեն շարունակվեն հնագիտական պեղումները:

Համաձայնագրի ընդունումը միջազգային հանրության պատասխանն է ստորջրյա մշակութային ժառանգության կողոպուտին և ավերածությանը, քանզի այն տեխնիկական առումով գնալով ավելի հասանելի է դառնում:

Սարոյանի արձանը՝ Երևանի կենտրոնում

Ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակի տոնական միջոցառումների շարքը շարունակվում է: Թերթ.am-ի տեղեկացմամբ՝ շուտով Երևանի կենտրոնում՝ Սաշտոց-Մոսկովյան փողոցների խաչմերուկում, կտեղադրվի քանդակագործ Դավիթ Երևանցու հեղինակած արձանը (ճարտարապետներ՝ Ռուբեն Հասարթյան և Լևոն Իգիթյան):

Արձանի տեղադրման նախաձեռնությունը Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի նախագահ, «Օտար, ամայի ճամփեքի վրա» հեռուստատեսային հաղորդաշարի հեղինակ Ռաֆայել Հովհաննիսյանին է: Նրան աջակցել են սփյուռքի հայ բարերարները, կառավարության աջակցությամբ էլ բարեկարգվել է տարածքն, ու կիրառված են պատվանդանի տեղադրման աշխատանքները:

Նոր շարժանկար ցեղասպանության մասին

2009-ի ապրիլին Երևանում կցուցադրվի 8,5 րոպե տևողությամբ նոր շարժանկար ցեղասպանության և բռնության մասին «106-րդ բանաձև» խորհրդանշական անվանմամբ: Շարժանկարի ստեղծման միտքը հղացել է երգչուհի Ֆլորա Մարտիրոսյանը, ռեժիսորը մնջախաղի թատրոնի գեղարվեստական ղեկավար Ժիրայր Դադասյանն է:

Շարժանկարը հայ, թուրք, ամերիկացի և հույն 4 երիտասարդների մասին է, ովքեր մտորում են ցեղասպանության շուրջ:

Չնայած շարժանկարի առանցքը հայոց ցեղասպանության թեման է, սակայն բռնության տեսարաններ չեն նկարահանվելու:

Հոգեկոր

ԵԿԵՂԵՑԻ՝ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՆԱԳՈՒՍՏՈՎ, ԿԻՍԱՄԵՐԿ ՈՒ ԳԼԽԱԲԱՅ



Չոգևոր արթնության այս վերջին ժամանակներում մեզ համար հոգևոր պահանջումը է եկեղեցի հաճախելը: Ցավոք, շատերս չգիտենք՝ ինչ պահվածքով և տեսքով պետք է մուտք գործենք Աստծո տուն:

Յուրաքանչյուր միջավայր իրեն համապատասխան հագուկապ է պահանջում, թելադրում վարվեցողության համապատասխան կանոններ: Անշուշտ, անպատշաճ կլինի, եթե ընկերոջ կամ հարևանի տուն այցելենք, օրինակ, մարգահագուստով, լողազգեստով կամ հողաթափերով: Սակայն ինչի՞նք նման է, երբ հայ աղջիկը, կինը քամահորորեն մինչև ծնկները մերկ, հողաթափերը ոտքերը զգած, եկեղեցի է գնում...

Քանի որ եկեղեցին Աստծո տունն է, ուրեմն պետք է պատշաճ տեսքով ներկայանանք այնտեղ, եթե, իհարկե, ցանկանում ենք, որ Տան Տերը մեզ պատշաճ ձևով ընդունի և ականջալուր լինի մեր սրտի խոսքին:

Դարերի ընթացքում կնոջ հիմնական դերը եղել ու մնում է

մատաղ սերնդի դաստիարակությունը: Սակայն վերջին շրջանում հասարակությունը կարծես իսկական «նուտացիայի» է ենթարկվել՝ վերանայելով ու փոփոխելով իր արժեքներն ու սկզբունքները: Կնոջ կարգավիճակը ևս կտրուկ և էականորեն փոխվել է: Այժմ նա իր համար գերագույն նպատակ է հռչակել տղամարդու գերակայությունից ազատագրվելը՝ ի վնաս իր կանացիության և քննադատության: Շատ կանայք ձգտում են առնականության մինչև անգամ կրելով այնպիսի հագուստ, որը նախատեսված է տղամարդկանց համար: Հարկ է նրանց պարզորոշ ասել՝ ձեր տներում, ձեր ննջասենյակներում հագեք, ինչ կամենում եք, ինչպես կամենում եք, սակայն տղամարդու հագուստով, կիսամերկ ու գլխաբաց եկեղեցի մի եկեք: Աստված արարեց մարդկանց որպես «արու և էգ», իսկ երբ ճաշակելով արգելված պտուղը՝ մարդիկ հասկացան, որ մերկ են, Աստված նրանց զգեստավորեց՝ պատվիրելով նաև, որ կինը տղամարդու զգեստ չկրի: Պողոս առաքյալն այս մասին կորնթացիներին ուղղված թղթում գրում է. «Եվ ամեն կին, երբ աղոթք է անում... բաց գլխով, անպատիվ է անում իր գլուխը» (Կորնթ. ժԱ 5): Իսկ ինչպես հայտնի է, «կնոջ գլուխն ամուսինն է»: Իհարկե, մարմնավաճառներին ու մյուս շնացող կանանց սա չի վերաբերում: Պետրոս առաքյալն ասում է. «Թող ձեր արտաքինը զարդարված չլինի հյուսվածքով, ոսկեհուռ վարսակալներով կամ պղնձագեղ զգեստներով, այլ սրտի ներսի մարդը՝ հեզ ու հանդարտ հոգու անկեղ-

ծությամբ» (Ա Պետրոս 3.3-4): Մեր սրտերում ճառագող Աստծո լույսը լավագույնս զգեստավորում է մեզ պարզությամբ՝ բարեփոխելով մեր բոլոր հարաբերությունները և մեր վարքին հաղորդելով զսպանություն, անաղարտություն և արժանապատվություն:

Հաճախ ականատես ենք լինում մի երևույթի, որը տիպիկ, աններելի և անթույլատրելի է: Սուրբ պատարագի կամ քարոզի ընթացքում ճեմելով եկեղեցի են մտնում կիսամերկ, պորտաբաց պղնձադուրբեր: Մոմեր գնելուց հետո, բարձրակրունկ կոշիկներով կտկտացնելով, ուղղվում են դեպի մոմակալները, վառում մոմերն ու ընթացող պատարագին անհաղորդ՝ ակնապիշ մոմերին նայում մինչև դրանց սպառվելը:

Ի՞նչ է սա: Դաստիարակության պակաս, թե՛ տգիտություն: Չէ՞ որ կան օրենքներ ու կանոններ, որոնք գրված են մեր սրտերում, որոնք պետք է պահպանվեն և չհակասեն մեր խղճմանը: Եկեղեցի մտնող յուրաքանչյուր ոք պետք է հարգի սրբազան կանոնները, եթե հարգում է ինքն իրեն: Հայ կանայք միշտ էլ եղել են խելամիտ, խիտեմ, բարեպաշտ, բարեկիրթ, իսկ ժամանակներին ի գորու չեն եղել երբևէ փոխելու, աղավաղելու նրա կերպարը: Ուրեմն եկեք տուրք չտանք օտար ու մեզ անհարիր վարքերին, այլոց կենցաղը, հագուկապը չբերենք մեր Տուն կամ առավել ևս մեր սրբություն սրբոցը՝ մեր **ԵԿԵՂԵՑԻՆ**:

ՍԻՐԱՆՈՒՅՑ ՊԵՏՐՈՍՅԱՆ


ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆԱՑՈՒՑՑ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ

Դեկտեմբերի 7 - Երկրաշարժի զոհերի հիշատակի օր
Դեկտեմբերի 9 - Հղություն Աննայի՝ Աստվածածնի մոր
Դեկտեմբերի 13 - Տոն Ա. Հակոբ Մծբնացու

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՄԱՍԻՆ

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈ

Ֆրանսիացի գրող (1712-1778)



Խոստովանում եմ, որ Աստվածաշնչի մեծությունն այլեքնում է ինձ, իսկ Ավետարանի սրբությունն ազդում է սրտիս: Ա. Գրքի համեմատ որքան չնչին են փիլիսոփայական երկերն իրենց ողջ փայլով հանդերձ: Հնարավոր է արդյոք, որ մեկ այլ ստեղծագործություն, այն էլ՝ սովորական մարդու ձեռքով գրված, այսքան կարճ ժամկետում փառավորվեր այսպես: Կարո՞ղ էր Նա, Ում մասին պատմում են սրբազան գրքերը, հասարակ մարդ լինել: Մի՞թե գրքերում երագողի կամ սմապարծ տղանդավորի ձայնն ենք լսում: Ի՞նչ հիասքանչ, ի՞նչ մաքուր է Նրա էությունը: Ի՞նչ առիմքնող բարության է համակված Նրա վարդապետությունը: Ի՞նչ վեսն են Նրա օրենքները: Ի՞նչ խորին է Նրա խոսքերի իմաստությունը: Ի՞նչ սառնասիրտ, ի՞նչ խորաթափանց, ի՞նչ դիպուկ են Նրա պատասխանները: Մեփական կրթերի ինչպիսի՞ տիրապետում: Արտե՞ղ կարելի է գտնել մի մարդու, իմաստունի, որն ընդունակ է այսպես գործել, տառապել ու մահանալ առանց թուլաստություն ու սնափառություն դրսևորելու: Այո, եթե Սոկրատն ապրեց ու մահացավ իբրև փիլիսոփա, ապա Հիսուս Քրիստոսն ապրեց և մահացավ իբրև Աստված:

Արդյոք կարո՞ղ ենք ասել, թե ավետարանական պատմությունը մտացածին է: Նման բաներ, իմ սիրելի՛ բարեկամ, չեն հորինվում: Ընդ որում, Սոկրատի պատմությունը (որի իսկությունը ոչ ոք չի կասկածում) նվազ արժանահավատ է, քան Հիսուս Քրիստոսի պատմությունը: Իսկ հակառակը պնդող ոչ այլ ինչ է, քան խուսափում, այլ ոչ թե հարցի լուծում: Մեր բանականությունն ավելի շուտ պատրաստ է ընդունել, թե մի անձնավորություն Իր կյանքով իսկապես բովանդակություն տվեց ավետարանական պատմությանը, քան ենթադրել, իբրև թե մի բանի անձինք միաբանվելով հորինել են այդպիսի պատմություն: Հրեա գրողներն ի վիճակի չէին հորինել ո՛չ այդպիսի տոն՝ արտահայտության երանգ, ո՛չ էլ նման բարոյականություն: Ավետարանն իր մեջ կրում է այնքան վեհ, զարմանալի ու միանգամայն անզուգական իմաստության հետքեր, որ հորինողն ավելի մեծ դրվատանքի կարժանանար, քան հեղորդը: Ի լրումն ողջ ասվածի պետք է ավելացնել, որ Ավետարանը միաճանաչան անհասանելի գիրք է, որի առջև կարկանդակ է բանականությունը, բայց և միաժամանակ՝ ոչ այնպիսին, որը չհասկանար մտածող մարդը և որի հետ չկարողանար համաձայնել:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐԳՎԱԾՆԵՐ

Դեկտեմբերի 1-15

- 1 - Բշ. Ես 35.4-8, Բ Կր 3.18-4.6, Ղկ 21.12-19
- 2 - Գշ. Իմս 1.1-7, Եր 16.16-21, Գրծ 1.12-14, Մր 6.6-13
- 3 - Դշ. Պահք: Ա Թս 5.1-11, Ղկ 13.10-17
- 4 - Եշ. Առ 21.15-25, Ես 19.19-21, Եբ 11.32-40, Մտ 10.37-42
- 5 - Ուր. Պահք: Ա Թս 5.12-28, Ղկ 14.1-11
- 6 - Շբ. Սրբոյն Նիկողայոսի Ձմիւռնացւոյ Աքանջելագործ հայրապետին: Եզկ 3.16-19, Բ Տմ 3.10-15, Գհ 10.11-16
- 7 - Կիր. Գ կիր. Յիսնակաց: Բարեկենդան Աք. Յակովբայ Պահոց: Ես 37.14-38, Բ Թս 1.1-12, Ղկ 14.12-24
- 8 - Բշ. Պահք: Սրբոցն՝ Մինասայ, Երմոգիմեայ, Գրաբոսի և կամաւոր աղքատացն Յովհաննու և Ալեքսիանոսի: Առ 15.33-16.7, Ես 18.7, Փպ 1.27-2.4, Մտ 10.37-42
- 9 - Գշ. Պահք: Յղութիւն Աք Աստուածածնի ի յԱննայ: Երգ 6.3-8, Մկ 3.1-2, Գղ 3.24-29, Ղկ 1.39-56
- 10 - Դշ. Պահք: Բ Թս 2.1-16, Ղկ 14.25-27
- 11 - Եշ. Պահք: Առ 1.1-9, Եզ 2.1-7, Գն 5.1-5, Մտ 5.1-12
- 12 - Ուր. Պահք: Բ Թս 3.1-18, Ղկ 15.1-7
- 13 - Շբ. Սրբոցն՝ Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին: Իմս 7.12-20, Ես 44.1-5, Եբ 13.17-21, Գհ 9.39-10.10
- 14 - Կիր. Դ կիր. Յիսնակաց: Ես 38.1-8, Եբ 1.1-14, Ղկ 17.1-10
- 15 - Բշ. Սրբոց հայրապետացն՝ Իզնատիոսի, Աղբի և Մարութայի եպիսկոպոսին: Իմս 5.1-8, Եբ 6.16-21, Ա Կր 4.9-16, Մր 9.32-36

ՄՅՈՒՌՈՆՆՕՐՀՆԵՔԻ ՄԱՍԻՆ



Երբ հավատավոր սիրտը ցանում է գտնել հավատքի ակունքները, հայտնվելով հավիտենության թագավորության մեջ՝ հասկանում է, որ արմատը եկեղեցին է, այն եկեղեցին, որ հիմնված է Քրիստոսով...

Մյուռոնի պատմության ակունքները շատ խորն են: Երբ Մարիամ Մագդաղիմացին Տիրոջից ներում ստացավ, ի նշան երախտագիտության՝ գնաց նրա մոտ և գլուխն օձեց նարդոսի ընտիր յուղով (որի փոքրիկ սրվակը մի ամբողջ կարողություն արժեք), քանի որ հնում այդպես էին վարվում թագավորների և Աստծո ընտրյալ սպասավորների հետ: Հենց այս յուղից իրենց հետ Հայաստան բերեցին Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները,

որն էլ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը խառնեց մեր անդրանիկ մյուռոնին: Այն պատրաստվում է 40 տեսակի ծաղիկներից և խառնվում ձիթապտղի անարատ յուղին՝ հատուկ աղոթքներով երկարատև պատրաստության շրջան անցնելով: Իսկ օրհնությունը կատարվում է Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռնաք: Նախ այն օրհնվում է Սուրբ Խաչով, ապա՝ այն գեղարդով, որով հռոմեացի զինվորը խոցել է խաչված Քրիստոսին, իսկ այնուհետ՝ Լուսավորչի սուրբ մասունքներն իր մեջ ամփոփող արծաթե աջով: Նոր մյուռոնին խառնվում է հիմը՝ տերունական զորությունն իր մեջ կրելու համար, ապա բաշխվում է համայն աշխարհի հայոց եկեղեցիներին՝ յոթ տարի ժամկետի համար:

Այս երանելի գիտակցությամբ ամենքիս սրտում թող թևածի Սուրբ Մյուռոնի բերած անաղարտ մաքրությունը, որ ի գորու է խորանից խորան բժշկության, չարն անմաքորդ վանելու և եղեմական ծաղիկներով զարդարելու մեր հոգու կամարները՝ ի փառս Աստծո:

ՆԱԻՐԱ ՊԵՊԼԱՅԱՆ

ԳԻՐԸ ԱՈՍԿԱՅ

ՆԵՆԳ ՄԱՐԴՈՒ ՊՍԿԿԵՐԸ

12 Անտոն Եւ անզգամ մարդը ծուռ ճառագարիներով է գնում, 13 որովհետեւ հենց ինքն է աչքերը թարթում, ոտքերով ցոյց տալիս Եւ նշանացի սովորեցնում մատներով:

14 Խոտորուած սիրտը չարիքներ է նկիւթում Եւ ամէն ժամանակ սերմանում է խռովութիւն քաղաքում: 15 Այդ պատճառով էլ Նրա կորուստը պիտի յանկարծակի գայ, Նա պիտի հաշմուխ ու մաշուի առանց բուժումի:

ԱՍԾՈՒՆ ԱՍԵԼԻ ԲԱՆԵՐ

16 Նա ծիծաղում է այն ամէնի վրայ, ինչ ատում է Տէրը, Եւ իր հոգու պղծութեան երեսից էլ պիտի կործանուի: 17 Այն աչքերը, որ թշնամանքով են Նայում, այն լեզուն, որ սուտ է խօսում, 18 այն ձեռքերը, որ արդար արին են թափում,

այն սիրտը, որ չար խորհուրդներ է նկիւթում, այն ոտքերը, որ շտապում են չարիքներ գործել, պիտի ոչնչանան: 19 Անիրաւ վկան բորբոքում է ստույթիւնը Եւ գրգռութիւն է գցում եղբայրների միջեւ:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Յ Թ - Ա Ջ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՐԱԶԴԱՆՑԻՆԵՐԸ ԹՈՒՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՄԵՆՏԻ ՓՈՇՈՎ



Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության օդերևութաբանության և մթնոլորտի աղտոտվածության մոնիտորինգի բաժնի տվյալների՝ ցեմենտի փոշու քանակությունը Հրազդանի օդային ավազանում 2008 թ. հունիս ամսին 4.8 անգամ գերազանցել է նորման: Նորմայի գերազանցումները գրանցվում են ամեն ամիս, և թիվը շարունակ աճում է: Այսօր նույնիսկ օդային ավազանի աղտոտվածության մասին պատկերացում է չունենալ մարդը կիսականա, որ օդը շնչելու համար վտանգավոր է: ՕՐՀՈՒՄ կենտրոնի բազմաթիվ ահազան-գերը մնում են անպատասխան. քաղաքային և մարզային իշխանությունները որևէ լուրջ միջոցառում չեն ձեռնարկում:

Խնդրի մասին տեղեկացվել են Բնապահպանական պետական տեսչությունը և անձամբ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանը: Ակնկալում ենք միջոցառումներ արտանետումները սահմանային նորմային մոտեցնելու ուղղությամբ:

ԷՐԳՐ ԵՆԳԻՔԱՐՅԱՆ Հրազդանի Օրհուս կենտրոն

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Անվճար ստացեք տեղական զանգերի վերծանումների էլեկտրոնային տարբերակը

Հարգելի սպառողներ, «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ն ստացել է բազմաթիվ դժգոհություններ «Բիլայն» ՓԲԸ-ի կողմից տեղական զանգերի վերծանման տրամադրման համար պահանջվող գումարի չափի առնչությամբ: «Բիլայն»-ը վերծանումները տրամադրելու համար յուրաքանչյուր առաջին էջի համար գանձում է 120 դրամ, իսկ յուրաքանչյուր հաջորդ էջի համար՝ 72 դրամ: Տեղեկացնում ենք ձեզ, որ համայն «Հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոններ»-ի 53-րդ կետի 2-րդ ենթակետի «Ծառայություններ մատուցողը պարտավոր է իր գործառնական գրասենյակներում բաժանորդի պահանջով նրան անվճար տրամադրել կատարած տեղական զանգերի վերծանման էլեկտրոնային տարբերակը երկկողմ ըն-

դունելի տարբերակով՝ մեկ օրինակ յուրաքանչյուր հաշվարկային ժամանակաշրջանի համար»:
Վերծանումների համար պահանջվող գումարն այլևս չի կարող խոչընդոտ հանդիսանալ ձեր կատարած զանգերի ստույգությունը ճշտելու համար: Այսուհետ դուք կարող եք վերծանումներն անվճար ստանալ էլեկտրոնային տարբերակով (flash՝ կրիչ, DVD/CD սկավառակ, էլեկտրոնային փոստ և այլն):
Ձեզ մերժելու դեպքում կարող եք դիմել «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ին:
Հասցեն՝ Երևան, Համրապետության 76/1
Հեռ. (010) 54 38 18
Հեռապատեն (010) 54 38 43
Էլ. փոստ՝ upcr@web.am
Կայքը՝ www.customer.am

ԼՐԱՀՈՍ

Տարեկան 55 հազար մահ՝ կատաղություն հիվանդությունից



Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ տարեկան 55 հազար մարդ է մահանում կատաղություն հիվանդությամբ:

Մինչդեռ այսօր արդեն կան անվտանգ և արդյունավետ պատվաստանյութեր այն մարդկանց համար, ովքեր կարող են վարակված լինել կատաղությամբ: Բայց, ցավոք, զարգացող երկրներում այդ պատվաստանյութը քիչ է օգտագործվում թանկ լինելու պատճառով:

Կատաղություն հիվանդությամբ վարակվելու ամենատարածված ճանապարհը շների, կատուների և այնպիսի վայրի գիշակերների կծելն է, ինչպիսիք են աղվեսը, ջրաղբյուրը, շնագայլը, գայլը: Ի դեպ, կատաղություն հիվանդությունից մահվան դեպքեր են արձանագրվել նաև Հայաստանում:

Եվրախորհուրդը երկու նոր ձեռնարկ է լույս ընծայել

Եվրոպայի խորհուրդը լույս է ընծայել երկու ձեռնարկ՝ «Ձեռնարկ ատելության խոսքի վերաբերյալ» և «Ձեռնարկ հասարակական վայրերում կրոնական խորհրդանիշներ կրելու մասին»: Ես փոխարտուղար Մաուդ դե Բոեր-Բուբուլիչինը նշում է, որ մարդու իրավունքները վերաբերում են հավասարապես բոլոր մարդկանց՝ թե՛ քրիստոնյա, թե՛ մահմեդական, թե՛ աթեիստ:
Որպես ազատության, արդարության, հավասարության և համերաշխության չափորոշիչներ մարդու իրավունքները միավորում են մեզ: Սակայն սահմանափակվում են հասարակական վայրերում կրոնական խորհրդանիշներ կրողների իրավունքները:

Ձեռնարկն արժարժուն է կրոնի և դավանանքի ազատության խնդիրը:
«Ձեռնարկ ատելության խոսքի վերաբերյալ» գրքի նպատակն է տարբերակել այն արտահայտությունները, որոնք, վիրավորանք պարունակելով հանդերձ, արգելված չեն համաձայնագրով: Շատ եվրոպական երկրներ արդեն համապատասխան օրենսդրություն են ընդունել, որով արգելվում են ատելությամբ արտաբերված խոսքերը՝ որպես ռասայական, կրոնական, ազգայնամուլական, անհանդուրժողականության դրսևորումներ:

Ձեռքերը լվանալու միջազգային օր



Հոկտեմբերի 15-ը հայտարարվել է Ձեռքերը լվանալու միջազգային օր: Անշուշտ, դա տարօրինակ, անգամ ամոթալի է թվում, բայց դա իրողություն է: Շատ ավելի խայտառակ, ամոթալի իրողություն է, երբ տարեկան 3,5 մլն երեխա է մահանում հակասանիտարության և վատ հիգիենայի հետևանքով առաջացող հիվանդություններից:
Այնպիսի պարզ գործողություն, ինչպիսին ձեռքերը պարբերաբար լվանալու է, հնարավորություն կտար գրեթե կրկնակի կրճատել մահացած մահացության դեպքերը:
ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը գտնում է, որ ձեռքերն օճառով լվանալը տարբեր վարակիչ հիվանդությունների կանխարգելման ամենաարդյունավետ և տնտեսող միջոցներից է:

ԲԻՈԷԹԻԿԱ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԶԼՍ-ՆԵՐ

2008 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ սեմինար-դասընթաց՝ «Բիոէթիկա, մարդու իրավունքներ և ՋԼՍ-ներ» թեմայով: Սեմինարին մասնակցում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործընկեր Հայաստանի ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար Համբարձում Սինասյանը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, Մոսկվայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի ներկայացուցիչ Ալլա Ամպարը, Հայաստանի Լրագրողների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը, Բիոէթիկայի ազգային կոմիտեի փոխնախագահ, «Բիոէթիկայի կենտրոն» ՀԿ նախագահ Իգոր Մադոյանը և ուրիշներ: Սեմինարի ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք ուշագրավ թեմաներ՝ բիոէթիկայի առաջացումը, բիոէթիկան և մարդու իրավունքները, կենսաթժշկական հետազոտությունների էթիկական և իրավական խնդիրների լուսաբանումը ՋԼՍ-ներում և այլն:
Քննարկումներն ընդմիջվեցին «Բիոէթիկա, խիղճ և օրենք» ֆիլմի դիտմամբ: Այնուհետև քննարկումներ ծավալվեցին նաև բիոէթիկայի մասին տեղական և արտասահմանյան լրատվամիջոցներում տպագրված նյութերի, ինչպես նաև «Բիոէթիկայի խնդիրները ՋԼՍ-ներում» գրքուկում տեղ գտած օրինակների շուրջ:

ՀՈԳԵՎՈՐ ՄԵՐՄ ԵՎ ՀԱՍԿ

Մարդու իրավունքների գրադարանային ցանցում ստացվել է ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՆՅԱՆՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԻՍՏՈՒԹԵԱՆ «ՀԱՍԿ» պաշտոնական ամսագրի 2008 թ. 7-րդ համարը: Համարում պահպանվել են հայրաբանական, մեկնաբանական, աստվածաբանական, պատմա-ուսումնասիրական, երիտասարդական և այլ խորագրերը, որոնց մեջքը այս անգամ տպագրվել են Չարեհ արք. Ազնաուրյանի «Մերտոդություն Մատթեոսի Ավետարանին», Ներսես քահանա Ներսեսյանի «Մկրտության խորհուրդը Նոր Կտակարանում», որկտ. Գեորգ Խրլոպյանի «Քրիստոնեական դաստիարակության առանձնահատկությունները»,

Վարանդ արեղա Քորթնոսյանի «Մեծափառ Վարդան վարդապետի կատարած համառոտ հավաքումը, սուր վարդապետների գործունեությունը, դավանելու համար Ամենասուրբ Երրորդությունը, հերձվածողներուն հակաճանություններում դեմ» և այլ հոգևորականների ու մտավորականների հեղինակած և թարգմանած հետաքրքրական հոդվածներ, դիտարկումներ, մեկնություններ:
Համարում, ինչպես միշտ, տեղ են գտել նաև միջլեզուական, դպրեվանքի կյանքն ու կաթողիկոսարանի իրադարձությունները լուսաբանող, ինչպես նաև ամփոփ և բազմազան լրատվական այլ նյութեր:



Թերթը հրատարակվում է Նիդեռլանդական միջլեզուական համագործակցության կազմակերպության (ICCO) ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը:

Հրատարակության Դ տարի
Հիմնադիր և հրատարակիչ՝
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2003 թ. Վանաձոր, Շիրակցու 1-ին նրք., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; ic@acrpc.am
Կայքը՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ ԱՆՆՈՒԿՅԱՆ
Խմբագիր՝ Հերմինե ԲԱՐՈՒՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Արմեն ՕՍԻՊՈՒԿ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մասով:
Ստորագրված է տպագրության 2008 թ. 11.25:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «ՄԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
SURVIVOR և ԱՆՎՃԱՐ